

Տեխնիկայի և գիտության նորարարությունները ու նվաճումները հանրակրթության մեջ կիրառող լաբորատորիան կոչվում է «Հանրակրթական տեխնոպարկ»:

1. Տեխնոպարկի գոյությունը և հանրակրթության մեջ նրա առկայությունը ինչպես ենք մենք պատկերացնում

Տեխնոպարկը աստղագիտության դասավանդման մեջ միտված է լրացնելու այն ծրագրային և ժամային սահմանափակումը որը որ կա հանրակրթական ծրագրում: Աստղացուցարանը և թվային աստղադիտակը կիրառվելու են որպես դասավանդման ժամանակակից միջոցներ: «Տիեզերք» ակումբի հետ համատեղ նախատեսվում է տիեզերագիտական նշանակության թռչող սարքերի, վայրէջքային ապարատների նախագծում և պատրաստում: Այս ամենը հանդիսանում է ակումբի գործունեության կիրառական շարունակությունը:

2. Ինչ ասել է տեխնոպարկ:

Տեխնոպարկը դա մի միջավայր է, որը պարունակում է բազմազան թվային միջոցներ, սովորեցնում է դրանց աշխատանքի սկզբունքները, կազմակերպում է դասընթացներ ծրագրավորման, ռոբոտատեխնիկայի, տիեզերգնացության, հրթիռաշինության և այլ տեխնիկական սարքավորումների բնագավառներում, ինչպես նաև համապատասխան գիտելիքների օգտագործմամբ ստեղծում նոր ռոբոտներ և թվային, ավտոմատացված սարքեր:

3. Հանրակրթության և տեխնոպարկի կապը:

Տեխնոպարկի գոյությունն անհրաժեշտ է հանրակրթական պրոցեսին անմիջական գույահեռմամբ, քանի որ այն միտված է դպրոցականների շրջանակներում ստեղծագործական, նորարարական հմտությունների զարգացմանը: Բացի նրանից, որ այն կրելու է կիրառական բնույթ, այն նաև նոր հետաքրքրություն և շարժառիթ կլինի դպրոցականի համար, որպեսզի նախ հանրակրթական ծրագիրը լավ յուրացնի (\$իզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա և այլն.), որպեսզի հասկանա այն ամենն ինչը կիրառում է համապատասխան սարքի աշխատանքի համար, ապա նաև ձգտի դասագրքից դուրս նոր գիտելիքներ ստանալ, որպեսզի հասկանա ժամանակակից կիրառական ինդիքներում ինչպիսի դժվարություններ և լուծումներ կան: Քանի որ այստեղ պատրաստվելու և ապա ներկայացվելու են նոր գաղափարներից ծնված սարքեր, ապա այն կօգնի անհատներին, որպեսզի ձեռք բերեն իրենց մտքերն ու գաղափարները ճիշտ պատճառահետևանքային կապով ձևակերպեն և ներկայացնեն իրենց ընկերներին և ոչ միայն:

4. Սովորողի կողմից ստացած գիտելիքների հետագա գործնական կիրառում:

Այս հարցին արդեն պատասխանել ենք նախորդ հարցերում:

5. Նշել այն կետերը, որոնց հնարավոր է հասնել տեխնոպարկը որպես հանրակրթության բաղկացուցիչ մասը կիրառելով:

1. Ապագա սերնդի մոտ ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական մտածողություն:
2. Սովորողներին հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալ արդի տեխնիկական ու գիտական նորություններին և նվաճումներին:
3. Նախագծել և իրականացնել սեփական մտահղացումներ:
4. Հանրակրթական առկանների դասավանդման մոր մեթոդների ու մոտեցումների մշակում՝ տեխնիկայի կիրառմամբ:
5. Սովորողների ապագա մասնագիտական ընտրության ուղղորդում:

Այնուհետև հնարավորություն կստեղծի այստեղ թիմային աշխատանքի խթանմանը, ինչը որ դարի հրամայականն է: Աշակերտներն ավելի խորը գիտելիքներ ձեռք կբերեն և կհասկանան, թե որտեղ կարող են դրանք կիրառել: Իրենց ձեռքբերումերով և ցուցադրություններով կոգնորեն նաև իրենց ընկերներին և դպրոցներ շատ աշակերտների:

6. Նշել այն ծրագրերը և նախագծերը, որոնք որ տեխնոպարկը իրականացնում է:

«Տիեզերք» ակումբի հետ համատեղ իրականացվում է լրացուցիչ կրթություն աստղացուցարանի և աստղադիտակի միջոցով: «Տիեզերք» ակումբի հետ համատեղ նախագծվում են և ապագայում նաև կպատրաստվեն էլեկտրաէներգիա ստանալու նոր միջոցներ և դրանց հնարավոր կիրառությունը առօրյայում օգտագործվող բազմաթիվ միջոցներում: Ծրագրված է նաև այլ մոլորակների կամ արբանյակների համար նախագծել էժան վայրէջքային միջոցներ, ինչպես նաև հետազոտող սարքեր:

7. Նախագծի գործնականում կիրառման շնորհիվ ակնկալվող արդյունքները:

Ճամբարի գործնական կիրառման արդյունքում հնարավոր կլինի միասին հավաքել Հանրապետության տարբեր մարզերից տիեզերագիտական, տեխնիկական և ստեղծագործական հետաքրքրություններ ունեցող աշակերտներին, տալ նախնական գիտելիքներ և պահել նրանց հետ կապը, արդեն սկսված նախագծերի, կամ ուսման հեռավար շարունակության համար: Նրանց մեջ խթանել թիմային աշխատանքն ու համագործակցությունը:

